

Ներածեալ վաճառքն են՝

գինն՝ սթէրլինգ գինն՝ սթէրլինգ
1890 1890էն տարբե-
րու թիւերը:

Անասուն	11,216.333 +	856.246
Ուտելիք եւ ըմ- պիւրք	162,638.974 +	1,557.675
Ծխախոտ	3,542.949 —	430.976
Մետաղք	23,710.901 +	1,626.056
Քիմիական նիւթք, ներկ եւ բնա- խաղախ	8,190.389 —	444.989
Իւղ	6,991.653 —	131.345
Անգործ բերք	126,865.444 —	8,136.313
Մանուածոյք	63,218.167 —	1,045.244
Այլ յւնեւորք	14,510.885 —	560.847

Գլխաւորաբար բաժնիակի եւ բրդի ներա-
ծու թիւեր նուազած է, առաջինն 3,029.000,
իսկ երկրորդը 2,902.000 սթէրլին արժողու-
թեամբ: Ներածեալ փայտը 1,658.000 սթէր-
լինի արժողութեամբ նուազած է:

Մենն Բրիտանիոյ արտածած ապրանաջ
գինը 1890ին՝ 263,542.500 սթէրլինի հասած
էր. իսկ 1889ին՝ 248,935.195ի: Ըստ այսմ
աճումը 14,607.305 սթէրլին է:

Արտածեալ նիւթք

սթէրլինգ սթէրլինգ
1890 1889էն տարբե-
րու թիւերը:

Անասուն	870.661 —	302.587
Ուտելիք եւ ըմ- պիւրք	11,235.061 +	493.732
Անգործ նիւթք	21,538.385 +	4,185.389
Գերձան եւ մա- նուածոյք	112,458.178 +	2,286.301
Մետաղեայ սպասք	45,251.434 +	4,337.005
Միքենայք	16,413.424 +	1,139.514
Չգետտեղէն եւ սպիտակ պէն	11,285.202 —	131.134
Քիմիական նիւթք եւ գեղարվարք	8,948.391 +	1,015.476
Այլ նիւթք	34,541.171 +	1,469.960
Այլ յւնեւորք	1,000.593 +	113.655



ԲԵՐՈՇԵՎԵՆ

ՄԱՅՈՒ ՅԱՆՆՈՒՎԵՅԸ

ԳՈՏՄԱԿԸ ՎԷՂ

(Պ 2. 2 ԻՐ Շ Փ Շ Է Լ Տ Է)

(Ը-ը-ն-ի-թ-ի-ն)



ԳԼՈՒԽ Գ.

արդ եւ գեղեցիկ օր մը՝
Իրիկուան դէմ՝
1796ին ի Փե-
ղեասպուրի Օր-
տովիւ իշխանին
ասն մէկ շքեղ սրա-
հին մէջ կը գտնու-
էին երկու հոգի. զե-
նուորական համա-

զգեստով եւ շքանշաններով զարդարեալ այրմ՝ եւ
հասցիւ եօթնեւտասնամեայ մանկամարդ օրիորդ
մը որ ձեռագործի զբաղած էր: Սրահն ամենա-
շքեղ կերպով յարգարուած էր. թանկագին
թանձք գորգեր գետինը կը ծածկէին, փառաւոր
ջահ մը ձեղունէն կախուած էր, եւ ուր աւքն
ուզուէր, կը տեսնուէր հարստութեան հետ զու-
գեալ ճաշակ: Սոյն երկու անձներ էին՝ տանուէրն
եւ իւր ֆէտորա աղջիկն: Իշխանին կողակիցն՝
աղջկան ծնանքէն քանի մը ասարի ետքն վախճա-
նած էր եւ հօր բովանդակ սէրն եւ ինամբը նո-
րահաս օրիորդին նուիրուած էր, որուն քաղցր
եւ ազնիւ բնաստու թիւերն նոյն իսկ դատարինէ
կայտու հւոյն աւքը յինքն ձգած եւ զինքն անոր
հաճելի ըրած էր: Թերեւս իւր հօրն այսպէս
աստիճանէ աստիճան բարձրանալը՝ իրեն սիրոյն
համար էր, թէ եւ իշխանն ալ իւր պարտուց մե-
ծապէս հաւատարիմ գտնուելովն՝ այս շնորհաց
ինք զինքն արժանի կացուցած էր: Արքունեաց
հետ գործք ունեցող ուրիշ անձանց պէս չուպլ

չէր. թէ եւ Տարուս էր՝ բայց իւր առանին կեանքը չափաւոր էր. նոյն իսկ կը խօսուէր, թէ երբեմն երբեմն սեւամաղձոտութեան երեւոյթներ կը նշմարուին անոր վրայ:

Իշխանն իւր յիսնամեայ կ'երեւար. իւր կերպարանքը Տեղ էր, մտրոք չուներ. բերնի բովըրը միայն երկու խոռոչներ կային, որոնց պատճառը՝ Տասակը կամ թերեւս Տոգեկան գարշոնի վշտեր էին:

Արաճին բարձր պատահաններէն՝ շքեղ եւ աճազին պաշտներով փառաւոր եւ յափշտակէջ փողոցը կը տեսնուէր, ուր արտաքայ կարգի կենդանութիւն մը կը տարէր: Արեգալին այսօր թէ եւ ձնու, երկնից կապուտակ կամարէն յերկիր կ'առաքէր իւր ճառագայթները: Բայտիբք՝ իրենց արծաթեայ բժժոճներովն, Տոժկու եւ մուշտակապատ կառապաններովն, եւ արբուսկան սակեգծ իտքերն զիրար կը յարդդէին սուրբով եւ խուռն բազմութիւն մը կ'երթեւեկէր շտպապա:

Այս վայրկենիս վայելուչ բախիւր մ'ալ կ'անցնէր. մուշտակէ թանկագին վերարկու Տագած երխասարդ մ'իներնին կը վարէր զայն. ձեւքի խարաղանովը բարեւ տուաւ երխասարդն՝ որուն պատասխանեց իշխանը Տաճութեամբ՝ մինչդեռ Ֆէոտորա աչքն անգամ չվերցուց իւր ձեռագործէն:

Փանինքի կոմսին դէմ Տակառակութիւն մ'ուներ, ըսաւ Օրլովիչ մեղմով, այլ յանդիմանական եղանակաւ մը, կանանց եւ արքունեաց սիրելոյն Տես այնպիսի կերպով կը վարուիս, որ պաղութիւն կը շնչէ. եթէ այսպէս շարունակելու ըլլաս, կը կարծեմ թէ կայսրուհին պիտի վշտացնես:

Իրեն կ'ըսեմ, թէ Փանինքի կոմսն ինծի Տամար շատ ընտիր անձնատրութիւն մըն է, ծիծաղելով պատասխանեց մանկամարդ օրիորդը: Իւր քծիքն ան Տոտ երկնագոյն ծաղիկ կը նմանի եւ բաց ասկէ — Լաֆոն՝ երիտասարդ տեղակալը չպատմեց մեզի՝ որ կոմսն այն վայրագ տեղակալին — Գրիգորովիչէ — բարեկամն է, որ ոչ շատ օր յառաջ՝ իւր արբեցութեան ժամանակը զիս թնշամանեց եւ միայն Պոդոս Մեծ-իշխանին աղաչանաց զիջանելով զինքը բանտէն ազատեց կայսրուհին:

Ի՛նչ Տոգ ընելու բան ունի Մեծ-իշխանը, որ իւր պաշտօնակալներէն մին մանկամարդ օրիորդ մը վերաւորէր է, յարեց կոմսը. ի Կալինա Գրիգորովիչէն պահանջեալ մի միայն յասկու-

թէ տխուր օրեր պիտի գան, եթէ մեծն Կատարին է իւր առաջնորդ փակէ, սակին տեղի պիտի տայ արծաթոյն առջեւը եւ — ձայնը մեղմացաւ — Տիւտայ Տամարը բաւական տարիք ունի. արդէն անգամ մը — իւր թոռին՝ Շուէտի Կուստաֆ թագաւորին նշանելու երկկունս — կաթուածաճար եղաւ. կրնայ փաթեւածը կրնուիլ: Բարձր ձայնիւ յառաջ տանելով ըսաւ թէ կ'ուզէի զքեզ ապահոված տեսնել. կրնայ ալ ըլլալ, որ Կատարինէին վախճանելովն ի Ռուսաստան փոփոխութիւններ ըլլան, որով եւ ես իմ ունեցած զիրքս կորսնցնելով՝ փեսայիս տունն ապաստանարան ինզորչու ստիպուիմ, եւ կայսրուհին ալ կը բաժնայ, որ —

«Ա՛՛՛՛՛՛: Ֆէոտորայի այտերն սաստիկ կարմիր է աչքերն պայծառանալ սկսան. Տեռուն նրբալարտ պատանի մը տեսած էր պաշտօնական զբեկտով: Երիտասարդ զորականն աչքերն ուրբան զուարթ կը նայէին աշխարհի, իսկ լայն սպիտակ ձեւաթու Տանձարոյ ու Տաստատամութեան նշանակ էր: Իւր գեղքը գեղեցիկ էր եւ փորքիկ խարտեալ ընչացք մը վերին շրթունքը կը զարդարէր:

Ճանրու տեղակալը, ըսաւ Տայլը, եւ յետոյ մտնուութեան իւր գտերը վրայ բեւեռելով աչքերն՝ յառաջ տարաւ. Ֆէոտորա, վերջապէս մատնեցիր ինծի այն բանը, զոր ես շատ ժամանակէ Տեռէ կ'իմանայի, սակայն Տաւատայ շէի ուզեր Գուն՝ Օրլովիչ իշխանին դուստրը, կը սիրես զԼաֆոն: որ անանուն եւ չքաւոր պաշտօնակալ մըն է:»

Ֆէոտորա ոտք ելաւ: Իւր թխահար գլուխը Տորը կըծոց մերձեցուց եւ գորովով կը նայէր անոր կերպարանաց:

«Այո՛. Տայլ իմ, ըսաւ զգածեալ ձայնով, այլ իմացած ես: Լաֆոն տեղակալն էր՝ որ ինծի պաշտպան Տանդիսացաւ ընդդէմ այն վայրագ եւ ժպիւրճ պաշտօնակալին. Լաֆոնն էր որ զիս միասնագամ քեզի բերաւ, երբ ինծի ընկերացող ծառան Գրիգորովիչէ սրէն վաննալով փախաւ: Աիրով ընդունեցար դուն զինքն ու նոյն օրէն սկսեալ մեր տան դռներն իրեն բացուեցան: Ասոր բնութիւնը բոլորովին տարբեր է այն թուրքարտ ու շողորդթ մարդուն բնութիւնէն, որուն աւարտը էութիւնը եւ զգածումն արտաքին պատուադիր ձեւը սոսմանն ողնջ իւրիք կ'անցնի:»

«Լաֆոնն թու այս միտութիւնդ գիտէ՞, Տարցուց Տայլը. ապա զիջէ՞ ես, որ ինք կը Տաւանի:»

«Երբեք այսպիսի խօսք մ'ընելու չէր Տամարձակեր Օրլովիչ իշխանին գտերն՝ որ վերջ

մեծ սիրով իւր տունը կը Տիրընկալէ. բայց իւր բերին ըսել չՏամարձակածն՝ աշքերն ինծի կ'ընես: Սիրելի Տայր, այդպէս խոտ մի նայիր. երբեք երիտասարդ եղած չէն, երբեք նոր արթնցող սրտի յատուկ գգածմամբ՝ սիրած չէն: Ալէքսի Լաֆոն՝ Օրլովիչ իշխանուհու Տոյն սիրոյն արժանաւոր է:»

Իշխանն իւր աղջկան պատասխանէն՝ դառու նահար եղածի պէս ծննդեցաւ: «Այո՛ — յարեց մեղմով — երբեմն սիրած եմ. — սոյն յիշատակները յիս մի վարժուցաներ. — բայց յետոյ կրկնապատկեր տուժած եմ: Այս պատճառաւ է որ զքեզ երանիկ երջանիկ տեսնել կը բաղձամ — եւ ստոյգ ալ, պատանին Լաֆոն պատուաւոր նկարագիր մ'ունի — բայց ձեր ընկերական դիրքն իրարու այնպէս անձնան է՝ որ ձեր երկուքին մէջ միութիւն մը յառաջ բերելու վայ մտածելն իսկ յետին յիմարութիւն կ'ըլլար. Ի՛նչ կ'ըտէ արբուհիքն ու Ի՛նչ կայսրուհիքն:»

«Կատարինէ ազնուաբո՛հ է. սիրտս իրեն կը բանամ այնպէս, ինչպէս կը բանայի մօրս, եւ ինքն ընտրածս իւր շնորհաց ժողովան գաւազանաւ կը շօշափէ եւ —»

Արահին դուռը բացուեցաւ: «Լաֆոն տեղակալը», ծանցց ապաստուորը: Թեթեւ կարմրութիւն մը պատեց ֆէտորայի կերպարանքը, մինչդեռ Տայրը տեղակալին ներս մտնելուն Տրաման կու տար. քանի մը վայրկեան ետքը երիտասարդ պաշտօնակալը սրահ մտաւ:

Առանց ամենեւին սեթեւեթեալ ձեւերով՝ մեծարանք ողջունեց զիշխանն ու մանկամարդ օրիորդը:

«Ճիշտ ժամանակին եկաք, տեղակալ, ըսաւ իշխանը, Տրամայ Ձեր վրայ կը խօսէինք: Ֆէտորա կը ցանկար որ դուք առաջինն ըլլաք նոր լուրն իմանալու մէջ:»

Պատանին փոքր աղջկան պէս կարմրեցաւ:

«Այդ ֆէտորա իշխանուհու թարեւորութիւնն է, ըսաւ խոնարհելով, եւ ապահով եմ որ զիս այժմէն մասնակից —»

«Կայսրուհին կը բաղձայ, որ ֆէտորա ամուսնանայ. եւ իրեն առաջարկեց ֆանինսքի կոմսը:»

Աղջկան դեղնիչն եւ բովանդակ մարմնովը դողալն իշխանին ամէն տարակոյսներն փարատեցին. ֆէտորան ճշմարիտ խօսած էր:

«Արդարեւ, կցեց պաշտօնակալն ոչ շատ դիւրութեամբ, այս լուրը շատ անակնկալ է:»

Ձեռքը կրծոցը մերձեցուց, իբր թէ կ'ուզէր մեղմել եւ ամբողջ այն ցուր, որ Տրամարդը երկամթի պէս սխալ կը ճմլէր:

Ֆէտորա ո՛չ խօսքով եւ ո՛չ Տայեցուածքով յայտնել կը Տամարձակէր իւր ցաւակցութիւնը, որ գրաւած էր իւր սիրտն. — թէ եւ միւս կողմանէ ալ ուրախութեան զգածում մը վրան կը տիրէր:

Իշխանն՝ իբր թէ պաշտօնակալին այլալուծիւնը նշմարած չէր, խօսքը յառաջ տարաւ.

«Կ'ուզէի գիտնալ թէ Ի՛նչ կարծիք ունիք ֆանինսքի վրայ՝ որ անուշա Չեղ ծանօթ պիտի ըլլայ ի ձեռն իւր բարեկամաց. առանձնատեսեալս կու գտնէ:»

«Հրաման տուր որ երթամ, խնդրեց ֆէտորա, վրան զի եկաւ այն ժամը՝ յորում տան գործոց նկատմամբ Տարեկ եղած Տրամաններ տալ ստիճ էմ:»

Իշխանին ձեռքը Տամբուրելով եւ Ալէքսիի Տրամեշտի ուրախան Տայեցը մ'արձակելով՝ մեկնեցաւ սրահէն: Իշխանն ու Ալէքսի առանձին մնացին:

Ալէքսի լուծիւնն ընդՏատելով խօսելու սկսաւ: Մերձեցաւ իշխանին եւ յուրեալ եւ դողդոջուն ձայնով ըսաւ.

«Տէր իշխան, ֆանինսքի պատանւոյն վրայ ունեցած կարծիքս կ'ուզէք լսել. — ահա իմ կարծիքս, զոր Տամարձակ կը յայտնեմ, թէ եւ ինքը կայսրուհու պաշտպանեալը ըլլայ. եւ ես ստով պաշտօնակն ըլլամ՝ եւ կենար իսկ կորսնցնեմ՝ — ուրախութեամբ կը զոհեմ ամենայն ինչ, եթէ յաջողմ ֆէտորա իշխանուհին ֆանինսքի կոմսին կ'ընն ըլլալու դաժան վիճակէն զերծուցանել: Երիտասարդ կոմսը Գրիգորովիչ տեղակալին մտերիմ ու սրտակից բարեկամն է — եւ այս յայտնի կը ցուցնէ իրեն ինչպիսի մէկն ըլլալը: Գրիգորովիչ եւ ոչ իսկ Տոգ կ'ընէ իւր մտածմունքներն աշխարհի առջեւ. ծածկելու. ընդՏակառակն ֆանինսքի՝ որ ամէն մտուր թէանց ընտանիք եւ բարեկամ է, գիտե զանոք կաշեպ ձեռնոցներով շօշափել՝ իւր ձեռագ սպիտակութիւնն չտգեղացնելու Տամար:»

Ուժասպառ գագրեցուց խօսքը:

«Ընդ վայր կը յուրեք, բարեկամ, պատասխանեց իշխանը ծիծաղելով, վայրկի մի եւս՝ եւ պիտի Տամարէի թէ Ձեր ֆանինսքի կոմսին վրայ կարգացած գատապարտութեան այս վճռոյն մէջ անձնասիրութիւնն ալ մաս ունի:»

Լաֆոնի դէմքը կարմրեցաւ:

«Տէր իմ, ես —»

«Գուք պատուաւոր երիտասարդ մըն էք, ընդՏատեց Օրլովիչ, և Ձեր կարծիքն իմ եւ զատերս կարծեաց բոլորովին Տամապատասխան

է, բայց ֆէտորա՝ Փանինքի կոմնի իրեն այր չուզելու ուրիշ մասնաւոր պատճառ մ'եւս ունի. իւր սիրտն ալ ազատ չէ, այր մ'ընտրած է՝ որ զինքը տմարդւոյ մը թշնամանքներէն ազատած է. այր մը՝ որ ունի բաւական աշնուութիւն իմանալու թէ գրից տարբերութիւն կայ, եւ գիտե միանգամայն չարարք չգործածել՝ իրեն բաց եւ Տիւրքի մտն մ'իրաւունքը: Ի մի բան՝ ֆէտորայ Օրլովիչ՝ գուտարս Չեզ միտեալ է:»

Ալեքսի ապշեցաւ. կը կարծէր թէ Հեուուէն իշխանին ձայնը կը լսէր՝ որ զինք գիւթելով ու մոզելով՝ անպատում երջանկութիւն կ'աւետէր:

« Ի՛նձ, կրկնեց դողդոջուն ձայնով, ք'նձ, Եղիկըստ եւ անծանօթիս: Ո՛չ, ո՛չ. եղածն երազ, քաղցր երազ մըն է՝ որ զիս խաղ կ'ընէ: »

« Ըսածս ճշմարտութիւն է, պատանի, խելակորոյս մի՛ ըլլաք, յարեց Օրլովիչ ծանրութեամբ: Թէ առ այժմ՝ ամուսնութիւնն չի կրնար ըլլալ, յայտնի է. Չեզը կայսրուհւոյն կը յամնենմ եւ ֆէտորա ալ իւր սիրտը գթառատ իշխողին կը բանայ եւ կատարինեայ հզոր ձեռքը կը հարթէ կը բառնայ ամէն խուլնչոտ՝ որ Լաֆօն տեղակալը գտնորէս կը բածնէ: Մինչեւ այն ստեն տունն Չեզի միշտ բաց է գիտնալով որ կրնամ Չեք պատուաւորութեան վրայ վստահել եւ ապահով եմ թէ շատխօսութեամբ ի գերեւ չ'ելլեր մեծարանաց հաւատարիք մը՝ որ Չեզ վստահութիւն կը չնէ: »

« Եւ ես այս ամէն շնորհաց ինք զինքս արժանաւոր պիտի ցուցնեմ, գուցե պատանին ոգեւորեալ: Որչափ բախտաւոր կ'ընեն զիս Չեք խոտաւնեիրը. թող տրուի ինձ առիթ՝ արժանաւոր ըլլայ ցուցնելու՝ առաքելով զիս կայսրուհւոյն իրր հաւատարիմ՝ ծառան ընդդէմ թշնամեաց, որպէս զի արեամբս գնեմ այն պատանին՝ որուն զիս արժանի կ'ընեն: »

« Հայրենեաց ծառայելու առիթ կ'ունենայք, ըսաւ իշխանը ծանրութեամբ. բայց ք'նչպէս — Ռուսաստան Չեք հայրենիքն է: Չեք անունը գաղղեական է եւ որչափ կը սխչեմ՝ անգամ մը լսեցի որ Գուք ինքնին՝ խօսելով Չեք մանկութեան վրայ՝ կ'ըսէիք թէ մանկութիւնս Փարիզը շրջակայքն անցուցած եմ: »

« Ճիշդ է, իշխան իմ, պատասխանեց պատանին Լաֆօն, մանկութիւնս Գաղղիս անցուցած եմ մարդու մը քով՝ որուն անունը կը կրեմ, զոր եւ հօրս պէս կը սիրեմ, կը մեծարեմ. բայց ո՛չ Գաղղիս այն երկիրն է, յոր յարած ըլլամ սրտով, եւ ո՛չ այն մարդը հայրս է: »

« Առակաւոր են Չեք խօսքերն ու հանելուկի կը նմանին. լաւ բացատրեցէք: »

« Գեւ մանուկ էի, սկսաւ Լաֆօն, երբ այն ամէն բան կը հետաքրքրէր զիս, որ Ռուսիոյ հետ յարաբերութիւն ունէր: Չննորութենէ ետքն՝ որուն սաստիկ սէր ունէի, գլխաւոր զբաղումն էր Ռուսաց լեզուի, գրականութիւնն ու պատմութիւնը: Ռուսիոյ ծառայութեան մէջ զինուոր ըլլալու առաջագրութիւնը հաստատուն եղանակաւ դրոշմուած էր մտաց մէջ. եւ Լաֆօն զոր հայր կը յորջորջէի, զիս որոշմանէս յետս կեցնելու չ'աջողեցին ետեւ թող տաւա՝ որ ուզածս ի գործ գնեմ: Տանուխն տարուան էի, երբ զինուորական ուսումն աւարտեցի: Բարձրագոյն դպրոցը յաճախած ժամանակս՝ Ռուսիոյ զեականին որդւոյն հետ ծանօթացայ՝ որ իւր հօր ներկայացուց ինզիրքս, եւ սոյն ազդեցիկ մարդուն միջնորդութեամբը՝ Նորին Վեհափառութեան՝ կայսրուհւոյն բանակաց միջն մէջ դրուակիր եղայ: Անձկանի դատարարակէս մեկնելուս նախընթաց երկիրներ՝ հրաւիրեց ինք զիս իւր սենեակը, եւ յայտնեց ինձ այն՝ զոր ի բազմաց հետէ գուշակած էի, թէ ինք իմ հայրս չէ եւ ինձ տրուած անունն իմն չէ. զայն եւս ծանօց թէ ծնողք չունիմ եւ թէ մինչեւ որ քսանուհւոյն գաղղիս չըլլամ՝ չեմ կրնար իմանալ ծնողացս անունն ու աստիճանը: Բայց միանգամայն ինձմէ խօսք առաւ՝ որ յամենայն կարեւոր դիպուածս՝ յորս իմ ո՞վ ըլլայ հարկ է որ իմացուի, իրեն գրեմ, գլխաւորաբար ըսաւ՝ ամուսնանալ ուզած ժամանակդ, երբ ամբարտաւանութիւնն ու նախապաշարուան անպաճոյճ պաշտանակալից արգելք ըլլան: »

« Ամբողջն ի միասին՝ վէպ մըն է, աւելցուց իշխանը քմծիծաղով. եւ ո՞վ գիտէ, թերեւս Լաֆօն տեղակալն զիմակին ներքեւ ծպտեալ իշխան մը կայ, որուն ազգակցութիւնը Օրլովիչ իշխանին իրեն պատիւ պիտի համարի: Այս պատմութիւնը կայսրուհւոյն աչքն ի Չեզ պիտի գարձընէ. կատարինէ՛ ետրհրդաւորը կը սիրէ: Բայց հիմայ, յարեց ոտք ելելով, պաշտօնս զիս կը կոչէ: Յետեւութիւն, բանկեմ. Չեք բախտը ծածուկ պահեցէք մինչեւ այն օրը, յորում՝ խորհրդաւոր հանգցոյց պարզուի: »

Իշխանը ձեռքը պատանւոյն երկաթեց, զոր Լաֆօն լի մեծարանօք շրթանցը մերձեցուց:

(Շարունակի՛ն)

